ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2021 - 2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը հաստատելու մասին**:

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

2. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)):

   Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Միքայել Սերգեյի Մելքումյան՝** միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

   2) **Եվգենյա Արայիկի Բազինյան՝** ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

   3) **Արմեն Յուրիկի Ղազարյան՝** տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

   Հավակնորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 3-ի, ժամը 15:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 6):

3. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.12.2021, N 221 (7662)):

   Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Գրիգոր Արշամի Նազարյան՝** տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) **Վահե Կարմենի Միքայելյան՝** ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Հավակնորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 3-ի, ժամը 15:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 6):

4. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Հասմիկ Միհրդատի Հարությունյան՝** կառավարման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

2) **Մարիանա Ռաֆիկի Քոչարյան՝** կառավարման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

3) **Անահիտ Վանիկի Մկրտչյան՝** տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Հայցորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 3-ի, ժամը 15:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 6):

5. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը մշակելու նպատակով աշխատանքային խումբ ձևավորելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

6. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության զարգացման հայեցակարգը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

7. **Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ծրագիրը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

8. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2021 թվականի գործունեության հաշվետվության մասին:**

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Դ.Ն.Հախվերդյան**:

9. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Դ.Ն.Հախվերդյան**:

10. 2018-2019 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, 2019 թվականին բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1676-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետի սահմանված ժամկետից ուշ ժամկետում ուսումնառությունը վերականգնելու համար ՀՊՏՀ դիմած նախկին ուսանողներ (արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից) **Հրաչյա Համլետի Եղիազարյանի** և **Սևադա Գագիկի Նավասարդյանի** ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու և 2-րդ կիսամյակ փոխադրվելու համար առաջացած առարկայական քննությունները հանձնելու թույլտվություն տալու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

11. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

12. **Ընթացիկ հարցեր:**

1) **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 2-ի, ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 1):

2) Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի** և նույն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Արտավազդի Գալստյանի «Վեբ էջերի կառուցվածքն ու դիզայնը (HTML+CSS)»** ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնամեթոդական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի հունվարի 19-ի, ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 7): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

3) Միկրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ) **«Սերվիս»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 2-ի, ժամը 16:00-ի նիստում (արձանագրություն N 8): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

4) Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Կամո Արամի Խաչատրյանի** և նույն ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Լավրենտի Թումանյանի «Տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր (ՏՇԿՀ)»** ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Ուսումնամեթոդական ձեռնարկը, 100 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 2-ի, ժամը 16:00-ի նիստում (արձանագրություն N 8): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

Գիտական քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 3

Երևան